ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՄՐԳԱՍՏԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

РЕСПУБЛИКА АРМЕНИЯ
АРМАВИРСКИЙ ОБЛОСТЬ
МУНИЦИПАЛИТЕТ
С. МРГАСТАН

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Մրգաստանի համայնքապետարան, Մրգաստան 3/15
հեռ. 0231-6-38-10, 094-80-53-63 mrgastan.armavir@mta.gov.am

Հ.Հ. ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ
ՊԱՐՈՆ՝ Ա. ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆԻՆ

N 3-128

«6» 10 2016թ.

ՀԱՐԳԵԼԻ ՊԱՐՈՆ ՄԱՐԶՊԵՏ

Ձեզ ենք ներկայացնում՝ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մրգաստանի համայնքապետարանի 2016թվականի սեպտեմբեր ամսվա ընթացքում համայնքի ղեկավարի կողմից արձակած կարգադրությունները, որոշումներ չեն ընդունվել:

Առդիր՝ 3 թերթ

ՄՐԳԱՍՏԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ

ՂԵԿԱՎԱՐ՝ Ռ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ…
Մուտք թիվ 112.7/1/1180-16
«07» 10 2016թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ՄՐԳԱՍՏԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Մրգաստանի համայնքապետարան, Մրգաստան 3/15
հեռ. 0231-6-38-10, 094-80-53-63 mrgastan.armavir@mta.gov.am

## ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

«6» սեպտեմբերի 2016թվական թիվ 29-Ա

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՐԳԱՍՏԱՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ 2015ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻՑ ՄԻՆՉԵՎ 2016ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍ ԸՆԿԱԾ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾՈՒՄ, ՀԱՆԳՈՒՑՅԱԼ ՈՒՆԵՑՈՂ ՅՈՒՐԱՔԱՆՉՅՈՒՐ ԸՆՏԱՆԻՔԻՆ՝ «ՍՈՒՐԲ ԽԱՉԻ» ԱՐԱՐՈՂՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ, ՀԱՏԿԱՑՎԱԾ ԳՈՒՄԱՐԸ ԲԱՇԽԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ՝ ՍՏԵՂԾՎԱԾ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի հոդված 34-ի առաջին մասի 6-րդ կետով և հիմք ընդունելով համայնքի ավագանու 2016թվականի օգոստոսի 22-ի, թիվ 4/1 արտահերթ նիստի, թիվ 45 որոշումը և համայնքի ղեկավարի 23 օգոստոսի 2016թվականի, թիվ 27 կարգադրությունը.

## ԿԱՐԳԱԴՐՈՒՄ ԵՄ

1.Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մրգաստան համայնքի ավագանու որոշումով՝ «Սուրբ խաչի» արարողություն իրականացնելու համար, համայնքում հանգուցյալ ունեցող յուրաքանչյուր ընտանիքին հատկացված՝ 20 000-ական /քսան հազարական/ դրամները, ընդամենը՝ 220 000 /երկու հարյուր քսան հազար/ դրամը, ԱՇԻ-ն բանկից ստանալու համար լիազորել՝ հանձնաժողովի նախագահ Մանուկ Հարությունյանին:
2.Գումարը ստանալուց հետո, հանձնաժողովը կատարի բաշխում ըստ ընտանիքների և կատարված աշխատանքի մասին զեկուցել համայնքի ղեկավարին:
3.Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում 2016թվականի սեպտեմբերի 6-ից:

ՄՐԳԱՍՏԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ Գ. ՀԱԿՈԲՅԱՆ

2016թվական սեպտեմբերի 6
գ. Մրգաստան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՐԳԱՍՏԱՆ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Մրգաստանի համայնքապետարան, Մրգաստան 3/15
հեռ. 0231-6-38-10, 094-80-53-63 mrgastan.armavir@mta.gov.am

# ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

«24» սեպտեմբերի 2016 թվական թիվ 30

## ՌԱՖԻԿ ՀԵՆՐԻԿԻ ԽԱՉԱՏՐՅԱՆԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության «Աշխատանքային օրենսգրքի» հոդված 166-ով, 169 հոդվածի երրորդ մասով և հիմք ընդունելով՝ Ռաֆիկ Հենրիկի Խաչատրյանի համաձայնությունը.

ԿԱՐԳԱԴՐՈՒՄ ԵՄ

1.Աշխատանքային պարտականությունների կատարման անհրաժեշտությունից ելնելով, Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մրգաստան համայնքի ղեկավար՝ Ռաֆիկ Հենրիկի Խաչատրյանին հետ կանչել արձակուրդից:
2.Ռաֆիկ Հենրիկի Խաչատրյանը անցնի իր պարտականությունների կատարմանը՝ 24 սեպտեմբերի 2016թվականից:
3.Գևորգ Օնիկի Հակոբյանին ազատել՝ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մրգաստան համայնքի ղեկավարի պարտականությունների կատարումից:
4.Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում արձակման պահից:

ՄՐԳԱՍՏԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ ՝ Գ. ՀԱԿՈԲՅԱՆ

2016թվական սեպտեմբերի 24
գ.Մրգաստան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ՄՐԳԱՍՏԱՆԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Մրգաստանի գյուղական համայնք, Մրգաստան 3/15
հեռ. 0231-6-38-10, 094-80-53-63 mrgastan.armavir@mta.gov.am

ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

«30» սեպտեմբերի 2016թվական թիվ 31

ՍՈՒՐԵՆ ԺՈՐԱՅԻ ՍԻՄՈՆՅԱՆԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության «Աշխատանքային օրենսգրքի» հոդված 109-ի առաջին մասի 2-րդ կետով և հիմք ընդունելով Մրգաստան համայնքի ղեկավարի և Մրգաստան համայնքի բնակիչ՝ Սուրեն Ժորայի Սիմոնյանի միջև կնքված պայմանագիրը.

ԿԱՐԳԱԴՐՈՒՄ ԵՄ

1.Լուծել՝ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մրգաստան համայնքի ղեկավարի և համայնքի բնակիչ Սուրեն Ժորայի Սիմոնյանի միջև կնքված «Ծառայությունների մատուցման ժամանակավոր աշխատանքային» թիվ 3 պայմանագիրը, ժամկետը ավարտվելու կապակցությամբ:
2.Սուրեն Ժորայի Սիմոնյանին՝ ազատել նյութական պատասխանատվությունից:
3.Սուրեն Ժորայի Սիմոնյանին իր մոտ գտնվող գործիքները հանձնի համայնքապետարան:
4.Հաշվապահին՝ կատարել վերջնահաշվարկ համաձայն «Աշխատանքային օրենսգրքի» հոդված 129-ի առաջին մասի 1-ին կետով:
5.Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում 2016թվականի հոկտեմբերի 1-ից:

ՄՐԳԱՍՏԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ

ՂԵԿԱՎԱՐ Ռ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

2016թվական սեպտեմբերի 30
գ. Մրգաստան